15237

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«12» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0232-23

Ձեռնարկողը՝ ***«Ար Սոլար» ՍՊԸ***
ք. Երևան, Դավիթաշեն 3 թաղ.10շ. բն.28

Գործունեությունը՝ ***«Արմավիր 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արմավիր մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0232-23

«12» դեկտեմբերի 2023թ.

Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/4 հողամասում նախատեսվող «Արմավիր 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ար Սոլար» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լեռանագոգ բնակավայր 2/4 հողամաս

Ներածական մաս. «Ար Սոլար» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել «Արմավիր 1» արևային ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝Օրենք/ 12-րդ հոդվածի, 4-րդ մասի, 1)-ին կետի, «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայով՝ Օրենքի Գ կատեգորիայի ընթացակարգով՝ պայմանավորված Օրենքի 12-րդ Գլխի 37-րդ հոդվածի (եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) պահանջներով: Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել հետևյալ նախագծային փաստաթղթերը.

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 21042023-04-0009 /ծածկագիր՝ 04-045-0109-0163/ վարձակալության հիմունքներով ամրագրված 8.84754 հա մակերեսով հողամաս՝ նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- գործունեության իրականացման Լիցենզիան՝ ԼԷ N0740,
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանը:

Նկարագրական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի /այսուհետ՝ Հայտ/ համաձայն՝ նախատեսվում է Լեռնագոգ

բնակավայրի 2/4 հողամասում՝ 8.84754 հա տարածքի վրա կառուցել 7.176 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային արտադրական կայան /այսուհետ՝ Արևակայան/ ՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով:

Բաղրամյան համայնքը գտնվում է մայրաքաղաք Երևանից 61 կմ, մարզկենտրոն Արմավիրից՝ 18 կմ, պետական սահմանից ուղիղ գծով՝ 15 կմ հեռավորության վրա: Համայնքը տեղակայված է Արմավիրի մարզի արևմտյան հատվածում, սահմանակից է Երվանդաշատ և Բագարան համայնքներին:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Դալարիկ բնակավայրից՝ 1,69 կմ, իսկ Լեռնագոգ բնակավայրից՝ 3,01 կմ, հանրապետական ավտոճանապարհից 1,93 կմ հեռավորությունների վրա:

Նախատեսվող Արևակայանը՝ 40°014'6.87 N հս. լայնության և 43°53'56.68" E արլ. երկայնության աշխարհագրական կոորդինատներով տեղակայված է ծովի մակարդակից 1035մ բարձրության վրա:

Գործունեության ենթակա տարածքի ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են 860,6-862,9մ սահմաններում: Բնական լանդշաֆտները չոր տափաստանային են: Տարածքը զուրկ է անտառային ծածկույթից, բացակայում է ծառաթփային բուսականությունը, բուսահողը:

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային և բնության հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրեր, գրունտային ջրեր և քաղցրահամ ջրի աղբյուրներ չեն հայտնաբերվել:

Գործունեության տարածքը «Որդան կարմիր» պետական արգելավայրից գտնվում է մոտ 25 կմ հեռավորության վրա: Ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը նույնպես բացակայում են տարածքում:

Նախատեսվող Արևակայանը իրենից ներկայացնում է 7.176 ՄՎտ դրվածքային հզորությամբ 12480 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով կայան: Արևակայանի կառուցման համար ընտրվել են JKM575N-72HL4-BDV ֆիրմային արտադրության 22.26% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 575Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2278x1134x35մմ: Փոխակերպիչները Huawei արտադրության են, մոդելը՝ SUN2000-330KTL-H2 330կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի, 6 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 24° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀ ՇՆ II-7.01-2011), զբաղեցրած մակերեսը կազմելու է 2,65 հա:

Արևակայանի տարածքում նախատեսված է կառուցել 35/0,8 կՎ լարման 6600 կՎՏ հզորությամբ երկփաթույթ տրանսֆորմատորով, յուղընդունիչ համակարգով, էլեգազային անջատիչներով և 35կՎ գերլարման սահմանափակիչներով ենթակայան, որտեղ 420մ երկարության ստորգետնյա մալուխային գծով արևակայանից տեղափոխվելու է արտադրվող էլեկտրական հոսանքը: Ավտոճանապարհները հատելիս մալուխները կանցկացվեն պոլիէթիլենային խողովակի մեջ անցկացված ձևով: Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է ենթակայանը միացնել NՏՊ-180-110/0523 տեխնիկական պայմաններով կառուցվող 110/35կՎ ենթակայանի 35կվ ԲՍ-ին՝ առանձին բջիջով:

Տրանսֆորմատորային ենթակայանի /այսուհետ՝ Ենթակայան/ հողանցման արտաքին կոնտուրն իրականացվում է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվելու է հողում 0,7մ խորությամբ ուղղահայաց էլեկտրոդներով (անկյունակներ) 50x50x5մմ՝ 2մ երկարությամբ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները միացվելու են հողանցման կոնտուրին, միացումներն իրականացվելու են եռակցումով: Ենթակայանի շանթապաշտպանությունն իրականացվելու է 1 հատ CB-105 տիպի 13մ բարձրության ե/բ հենասյան վրա տեղադրված շանթարգելով: Հայտով նախատեսված արտաքին լուսավորության համար շանթապաշտպանության ե/բ հենասյան վրա ամրանալու են 2 հատ 200Վտ հզորությամբ LED լուսարձակներ:

Արևակայանի և Ենթակայանի տարածքներն ամբողջությամբ ցանկապատվելու են 2մ բարձրությամբ ցանկապատով: Ենթակայանի տարածքը ցանկապատվելու է 50x50x2.5մմ չափերի բետոնե հիմքերով ցինկապատ մետաղալարով, իսկ Արևակայանի տարածքը՝ 2030x2700x25մմ չափերի մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով, ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Շինարարության տևողությունը կկազմի 110 օր: Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 20 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Գործունեության իրականացման համար կազմակերպվելու է շինհրապարակ, որն ամբողջ գործունեության տարածքն է, որից մոտ 1000 քառ մ. արտադրական տարածքն է: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործելու են՝ հորատող՝ 6 հատ, հարթեցնող՝ 2 հատ, ավտոինքնաթափ՝ 1 հատ, ավտոաշտարակ՝ 2 հատ, էքսկավատոր՝ 2 հատ, աշտարակային կռունկ՝ 1 հատ մեքենա մեխանիզմներ: Օգտագործվելու են տարբեր նյութեր՝ մալուխ, մետաղ՝ ալյումին, պողպատ, ներկ, մեկուսիչ նյութեր, բետոն, խիճ, փայտանյութ: Օգտագործվող բետոնանյութը բերվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով:

Բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, մեքենաների անիվների լվացման, շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են տեղադրելով 1,0*1,5 չափերի 6 հատ շարժական բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (20մարդ)՝ 60,25 մ^3:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, հողային աշխատանքների շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումների հետ (վառելիքի այրման արդյունքում):

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով, փորվելու և հանվելու է 1630 մ³ հողային գրունտ, որից 1495 մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած 135 մ³ կհեռացվի մոտ 3կմ հեռավորության վրա գտնվող Բաղրամյան համայնքի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով:

Շինարարության փուլերում առաջացող թափոնները կլինեն շինարարական աղբի՝ նյութերի մնացորդների (ավազ, շեբեն, ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթերի, պարկերի, մետաղական մնացորդների (մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն) և կենցաղային աղբի տեսքով:

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

Արևային կայանի և Ենթակայանի շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը հիմնականում կապված են՝

- օդային ավազանի աղտոտում՝ արտանետումներով,
- հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- լանդշաֆտի փոփոխությունների,
- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու են տարածքի մաքրման, հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը նպաստելու է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Լեռնագոգ բնակավայրի ճանապարհների և ոռոգման համակարգերի վերազինման և վերանորոգման նպատակով «Ար Սոլար» ՍՊ ընկերության կողմից հատկացվել է մոտ 165մլն. ՀՀ դրամ :

Պատճառաբանական մաս. Արևային ֆոտովոլտային կայանը էլեկտրաէներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է, ինչի շնորհիվ արևի էներգիան վերափոխվում է էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի և ունի էլեկտրաէներգիայի սպառման մատչելի գին: Արևի էներգիան, ի տարբերություն փայտի, գազի, ածուխի կամ մազութի, անսպառ է: ՀՀ ունի արևային էներգիայի մեծ ներուժ, բնապահպանական տեսակետից մաքուր է՝ չի աղտոտում շրջակա միջավայրը: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակահատվածում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Ենթակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով: Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ 20 մարդու համար: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից՝ ազդեցությունները կլինեն շատ փոքր:

Եզրափակիչ մաս. Արևային ֆոտովոլտային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ՝ փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի դպրոցի շենքում իրականացվել են նախատեսվող գործունեության հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արմավիրի մարզպետի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտում ներկայացված բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական և շահագործման աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:
- Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքներն իրականացման և շահագործման ընթացքում խստորեն պահպանել ՀՀ-ում գործող էներգետիկ բնագավառի օբյեկտների աշխատանքի և տեխնիկական անվտանգության, ինչպես նաև ատակարգ իրավիճակներին վերաբերվող նորմերի պահանջները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:
- Ստորգետնյա մալուխային գծերը ավտոճանապարհներով անցկացնել պոլիէթիլենային խողովակի մեջ՝ ճանապարհները տնօրինող կազմակերպության հետ համաձայնեցված կարգով:
- Խախտված հողային զանգվածը հնարավորինս արագ վերականգնել՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու համար:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Շինարարական աշխատանքների իրականացման համար ապրանքային բետոնի ձեռք բերումը և տեղափոխումը իրականացնել Հայտում նախատեսված ձևով: Խուսափել շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնաջրերի արտահոսքից՝ բացառելով հողի աղտոտումը բետոնաջրիերով:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/4 հողամասում նախատեսվող «Արմավիր 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան